Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՏԱՐԻՆԵՐԻ ՄԻՋՈՎ

Հայաստանի սովետական գրողների երրորդ համագումարը, որն իր աշխատանքներն սկսեց 1954 թ. հուլիսի 21-ին Երևանում, թղթակիցների ու մեկնաբանների կողմից սկզբից ևեթ որակվեց որպես պատմական։ Համագումարը պատմական էր նախ այն պատճառով, որ ի թիվս հրավիրյալների, շատ էին գրական մեծ անուն ունեցողները՝ Կ. Սիմոնով, Ռ. Գամզատով, Վ. Զվգյագինցևա, Սուլեյման Ռուստան, Ե. Սուրկով, Կ. Գամսախուրդիա։ Գրականության դասականների այսպիսի ընտրանի Երևանում վաղուց չէր եղել։

Համագումարը պատմական էր նաև այն առումով, որ հայ գրականության երիտասարդ ու տարեց ստեղծագործողների թվում՝ Գեղամ Սարյան, Ազատ Վշտունի, Նաիրի Զարյան, Հրաչյա Քոչար, Սիլվա Կապուտիկյան, Գևորգ Էմին, Հովհաննես Շիրազ, իրենց գործուն մասնակցությունն էին բերում հայ գրականության մեծ դասականները՝ Ավետիք Իսահակյանը և Դերենիկ Դեմիրճյանը։

Երբեք չեմ մոռանա այն հուզիչ պահը, երբ ամբիոնից արտահայտվող հռետորը արտաբերում էր Իսահակյանի ու Դեմիրճյանի անունները։ Անհապաղ բռնկող ծափերի ուղեկցությամբ, դանդաղ ոտքի էին ելնում նրանք՝ այս մեծ ուշադրությունից մանկան պես շփոթված, երկուսն էլ փոքրամարմին, ամոթխած, երկուսն էլ հայ գրականության դասական՝ հասկացողության ամենահիսկական իմաստով, երկուսն էլ համազգային սրբություն ու պաշտամունք։

Բոլորս էլ գիտեինք, որ երկու դասականների անցած գրական ուղին ամենևին էլ վարդերով ծածկված չի եղել, որ ժամանակի մտավոր կյանքին արգոսի աչքերով հետևող կոմունիստական կուսակցությունը անում էր հնարավոր կարելին ու անկարելին նրան «գաղափարական ճշմարտացի ուղղություն

հաղորդելու» համար։ Եվ այդ ամենը ամենից շատ ու անողոքաբար հարվածել էր հենց Իսահակյանին ու Դեմիրճյանին։ Այդ «դաստիարակչական» գործունեության աղետալի հետևանքն էր, որ նրանք չկարողացան գրել այն, ինչ ցանկանում էին, գրել այնպես, ինչպես մտածում էին, ամենևին չբացառվեցին դեպքերը, երբ թղթի վրա նյութական կերպարանք չստացան շատ մտքեր, գեղարվեստական ստեղծագործություններ։

Համագումարը պատմական կոչվելու իրավունք ուներ նաև այն պատճառով, որ նրան առաջին անգամ իրենց մասնակցությունն էր բերում հայ գրողների այն փոքրիկ խումբը, որ անուն ու քաղաքացիական ճանաչում էր ստացել Հրաչյա Քոչարի մի բնութագրմամբ. «դեկաբրիստներ»։

... Նրանք դահլիճ մտան հաղթական պահվածքով, առաջին նիստի սկզբին, համագումարի մասնակիցների խանդավառ բացականչությունների ու հիացական շշուկների ուղեկցությամբ։ Առաջինը Վահրամ Ալազանն էր՝ անբաժանելի կողակցի՝ Մարոյի հետ, նրանց հետևում էր Գուրգեն Մահարին, իր լատիշուհի կնոջ՝ Անտոնինայի հետ, ապա գալիս էր հուզմունքից շփոթված Վաղարշակ Նորենցը։ Բոլորն էլ երջանիկ, ներքին հուզմունքից փայլող աչքերով։ Մարոն լալիս էր ու ծիծաղում։ Մահարին չէր էլ թաքցնում արցունքները։

Խմբի մասին համագումարի մասնակիցներս բավականին տեղեկություններ ունեինք։ Գիտեինք, որ նրանք իրենց կյանքի տասնյոթ տարիները անց էին կացրել Սիբիրի համակենտրոնացման տարբեր ճամբարներում, վայելելով այդ երկրային դժոխքի բոլոր «բարիքները», որ երջանիկ պատահականությամբ ողջ ու առողջ վերադարձել էին հայրենիք։ Պատմում էինք, որ Ալազանի կինը՝ Մարոն, 1949 թ. կիսատ թողնելով ուսումը Երևանի բժշկական ինստիտուտում, կամավոր մեկնել էր Սիբիր, իր «քաղաքական հանցագործ» ամուսնու մոտ և նրա հետ հինգ տարի ճաշակել էր աքսորականի կյանքի բոլոր

դառնությունները։ Գիտեինք նաև, որ Մահարու հայազգի կինը, ամուսնու բանտարկությունից հետո, հրապարակավ հրաժարվել էր «ժողովրդի թշնամուց», որի հետևանքով Սիբիր աքսորված գրողը այնտեղ երկրորդ անգամ ամուսնացել էր լատիշուհի Անտոնինայի հետ։ Լատիշուհու արարքը հավասարազոր էր հերոսության, քանզի ամուսնանալ «քաղաքական հանցագործի» հետ, որի հետ նույնիսկ խոսելն էր արգելված, նշանակում էր կամավորապես մահվան գնալ։ Գիտեինք, վերջապես, որ «դեկաբրիստները» Մոսկվայի և Հայաստանի տարբեր հանձնաժողովներում հաջողությամբ կարողացել էին ապացուցել իրենց անմեղությունը, արդարացվել էին լրիվ ու վերականգնելով իրենց բոլոր քաղաքացիական իրավունքները, Երևան էին ժամանել 1954 թվականի հուլիսի 9-ին՝ համագումարի բացումից մի քանի օր առաջ։

Եվ վերջապես համագումարում պարզ դարձավ, որ «համազգային ֆորումի» վերջին նիստին իր մասնակցությունն է բերելու և սովետահայ գրական կյանքի մասին ընդարձակ ճառով հանդես է գալու Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանը։

... Հուլիսի 25-ի առավոտյան նիստում Թովմասյանն իր ելույթն սկսեց մեծարելով Վարպետին՝ Ավետիք Իսահակյանին, բնութագրեց վերջին շրջանի հայ գեղարվեստական գրականության անցած ճանապարհը, վերադարձավ այն սխալներին, որոնք թույլ էին տրվել Ռաֆֆու և Պատկանյանի վերաբերյալ, ապա դարձավ «դեկաբրիստներին»։ Մինչ այդ հանդարտ խոսող Թովմասյանը հանկարծ դարձավ շեշտակի և ասես կրակոցների նման դահլիճ նետեց հետևյալը. «Հայաստանի կոմպարտիայի կենտրոնական կոմիտեն այժմ զբաղվում է սովետահայ այն գրողների հարցով, որոնց նկատմամբ սխալ վերաբերմունք է ցույց տրվել անցյալում։ Այդ գրողներին հնարավորություն կտրվի վերադառնալ գրական կազմակերպության շարքերը, իսկ նրանց ստեղծագործությունները

կգնահատվեն ըստ ամենայնի»։ Թովմասյանի հետագա խոսքն ավելի հատու էր. «Սակայն հետևողականորեն ուղղելով անցյալում թույլ տված սխալները, մենք ոչ մի զիջում թույլ չենք տա իդեոլոգիայի բնագավառում»։

Հաջորդ երեկո մեր տուն եկան հորս հին ընկերներն ու բարեկամները՝ Վահրամ Ալազանը Մարոյի հետ, Գուրգեն Մահարին, Վաղարշակ Նորենցը և մի «դեկաբրիստ» ևս՝ Հովհաննես Մոկացյանը։ Խոսակցությունն սկսեց Գուրգեն Մահարին։

- Լսեցիք չէ՞, առաջին քարտուղարի ուղենիշային ելույթը, – նա դառը ծիծաղեց, – մանավանդ այդ ելույթում մեզ վերաբերվող մասը։

- Կենտկոմի առաջին քարտուղարը ելույթ է ունենում, – ավելացրեց Նորենցը, – մի ամբողջ պարբերություն է խոսում մեր մասին և ոչ մեկիս անունը չի տալիս...

- Դե դա... , – զգույշ սկսեցի ես, – շատ էլ կարևոր մի բան չի, – որովհետև...

- Ո՞վ ասեց, որ կարևոր բան չի, – ինձ ընդհատեց Ալազանը, – մենք ինչ է, անուն-ազգանուն չունե՞նք, մեր գրած գործերը վերնագրեր չունե՞ն, մեզնից կատարված թարգմանությունները, այն էլ մի քանի լեզուներով, գոնե մի անգամ հիշատակելու կարիք չկա՞ր։ Ինչպե՞ս էր, որ Թովմասյանն իր ելույթում հիշատակեց շատ երիտասարդների անուններ, իսկ մերը զարմանալի կերպով մոռացավ։

- Դու դա ես ասում, – Ալազանին բորբոքված ընդհատեց Նորենցը, – մտել եմ Գուրգեն Բորյանի մոտ ու խնդրում եմ, որ թույլ տան մեզ նախագահությունում նստել։ Եվ ինչ պատասխան ստացա... «Նախագահությունում ձեր նստելու համար սանկցիա չունենք»։

Ծանր, տհաճ լռություն տիրեց։

- Դրանից ավելի վատն էլ ինձ հետ պատահեց, – սկսեց Մահարին։ - Համագումարում ելույթ ունենալու համար ձայնի իրավունք խնդրեցի նախագահ Գուրգեն Բորյանից։ Սա թե՝ «Հիմա չի լինի, վաղը նախագահելու է Հրաչյա Քոչարը, դիմիր նրան»։ Հաջորդ օրն առավոտյան մոտեցա Քոչարին՝ «Չի լինի, Գուրգեն, երեկոյան կայանալիք նիստին նախագահելու է Հարություն Մկրտչյանը, հարցը նրա հետ լուծիր», Հարություն Մկրտչյանն էլ թե՝ «Ես ոչ քեզ, ոչ էլ ձեզնից որևէ մեկին ձայն չեմ տա։ Սիբիրից եկած մարդիկ եք, ո՞վ գիտի, ինչեր կասեք»։

- Լսեցի՞ր սկզբունքային երիտասարդ քննադատ, – հեգնական տոնով ինձ դարձավ Ալազանը, – իսկ դու ասում ես կարևոր չի։ Չէ՛ սիրելիս, սա քաղաքականություն է, այն էլ շատ որոշակի և մեր դեմ մշակված քաղաքականություն...։ Այստեղ մեզ վախենում են ձայն տալ, որովհետև մենք՝ Սիբիրից եկածներս, կպատմենք բոլորին, թե ովքեր են մեղավոր մեր չարած մեղքերի համար տասնյոթ տարի Սիբիրում անցկացնելու համար, կհիշատակենք այն մարդկանց, ում քնքույշ խնամքը անպակաս էր մեզնից, – Ալազանը դառը ծիծաղեց, – մի խոսքով կներկայացնենք մեր տեսած Սիբիրը և մեր ճանաչած մարդկանց։

Կրկին լռություն տիրեց։

- Ես պարզապես չեմ հասկանում, – մտազբաղ սկսեց Նորենցը, - թե ինչ իդեոլոգիական զիջման մասին էր խոսում Թովմասյանը։ Մեզանից որ մեկն է այդպիսի սխալ գործել, որ հիմա զիջում պիտի խնդրի։

- Ինչու չես հասկանում, – նորից խոսեց Ալազանը, – նորից եմ ասում, մեր նկատմամբ մշակված է անտեսելու ու գաղափարական դիվերսիայի ենթարկելու հետևողական քաղաքականություն։ Այսինքն՝ ազատ աքսորում էինք Սիբիրում, նույնպիսի ազատ աքսորում էլ պետք է լինենք Հայաստանում։ Ահա և բոլորը։

- Եվ ես շատ եմ անհանգստանում, – խոսքը շարունակեց Մահարին, – որ ամեն ինչ այսքանով չվերջանա: Մի քանի օր առաջ Սուրեն Թովմասյանի մոտ եմ եղել: Ընդունեց շատ ջերմ, սրտաբաց, բայց հենց սկսեցի խոսել առաջիկայում իմ անելիքների մասին, լրջացավ, խստացավ, խոսակցությունը դարձավ անբարեհամբույր ու հասկացա, որ իմ գրական մտահղացումները երբեք էլ ընթացք չեն ստանալու:Վերջում էլ հասկացրեց, որ համագումարին մեր մասնակցությունը պետք է դիտել որպես մեր նկատմամբ ցուցաբերած մեծ առանձնաշնորհ:

Եվ հախուռն ու կրքոտ այս խոսակցությունը երկարեց ու երկարեց...

* * *

Շատ փաստեր այս բանավեճից պահեցի մտքումս, դրանցից շատերն էլ համալրեցի նորանոր տեղեկություններով, և երբ համագումարի ավարտից որոշ ժամանակ անց հորս հետ գնացինք Սուրեն Թովմասյանի մոտ՝ շնորհավորելու Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում նրա ընտրությունը, ես արդեն նախապատրաստված էի: Անցողակի նշեմ, որ Սուրեն Թովմասյանն ու հայրս հին ծանոթներ էին, թեև ծանոթությունը երբեք չէր վերածվել մտերմության:

Ծայր առավ առտնին խոսակցություն հանրապետության կարգավիճակի ու առաջիկա անելիքների մասին: Եվ երևի ամեն ինչ այդպես էլ կավարտվեր, եթե հենց ինքը՝ Թովմասյանը, խոսակցություն չբացեր Հայաստանի գրողների համագումարի մասին: Որսալով բարեպատեհ պահը, խոսակցությանը միջմուխ եղա ես, համառոտակի շարադրելով մեր տանը կայացած բանավեճի հիմնական մանրամասները:

Հուզումնառատ ելույթս տևեց երևի երկու-երկուսուկես րոպե և այդ ընթացքում զարմանքով նկատում էի, թե ինչպես է հենց աչքիս առաջ այլափոխվում Սուրեն Թովմասյանի դեմքը: Հայացքը մի տեսակ մթնեց,

հոնքամիջում կնճիռներ հայտնվեցին։ Հասկացա, որ փոթորիկ հասունացրեցի և այն որտեղ որ է, պիտի պայթի։

- ՈՒրեմն այդպես, – արդեն բոլորովին փոխված ձայնով ինձ դարձավ Թովմասյանը, – փաստորեն թարս ու շիտակ են գնահատել իմ ելույթը, գլխիվայր եզրակացություններ արել իմ ասածներից ու քեզ պես դեղնակտուցների մոտ էլ կարծիք ստեղծել, ապակողմնորոշել, որ իրենք իրավացի են, – հեգնանքով ծիծաղեց, – լա՛վ է, շա՛տ լավ, ի՞նչ ասել կուզի։

- Կարծիքի հարց չկա, – զգույշ սկսեցի ես, բայց Թովմասյանը ընդհատեց ինձ, – հիմա տես, թե ես ինչ կասեմ, – նա կտրուկ ուղղվեց ու խստաշունչ հայացքը բևեռեց դեմքիս։ - Դու որևէ տեղ տեսե՞լ ես, որ Գրողների միության անդամ չեղած մարդը ոչ միայն մասնակցի համագումարին, այլև ցանկանա նստել նախագահությունում։

- Ինչպե՞ս թե Գրողների միության անդամ չեղած..., – նորից սկսեցի ես, բայց Թովմասյանը դարձյալ շեշտակի ընդհատեց ինձ։

- Ա՛յ հենց այդպես։ Երբ ժամանակին կալանավորել են Չարենցին, Ալազանին, Մահարուն, Նորենցին և մյուսներին, Հայաստանի Գրողների միության նախագահությունը արտահերթ նիստ է հրավիրել և նրանց բոլորին հեռացրել է միության կազմից։ Հայրենիք վերադարձած այդ խումբը ընդամենը մի քանի օր է, ինչ այստեղ է և այսօրվա դրությամբ նրանք դեռ Գրողների միության անդամներ չեն։ Դե ասա խնդրեմ, էլ ո՞ր օրենքի համաձայն նրանք պետք է տեղ զբաղեցնեին Հայաստանի Գրողների միության համագումարի նախագահությունում։

- Իմ կարծիքով դա կոպիտ սխալ է, որը պետք է ուղղվի, – վրա բերեցի ես։

- Իմ ելույթում ես էլ հատկապես ընդգծեցի, որ մեր դասականների նկատմամբ թույլ են տրվել անհանդուրժելի սխալներ, որոնք հիմա շուտափույթ պետք է ուղղել և ներկա դրությամբ մենք հենց դրանով էլ զբաղված ենք, –

Թովմասյանը մի պահ լռեց, – բայց փաստը մնում է փաստ։ Այսօրվա դրությամբ նրանք Միության անդամներ չեն, համագումար էլ եկել են սոսկ որպես հրավիրվածներ և ուրեմն չունեն այն իրավունքները, որ ունեն միության լիիրավ անդամները։ Իսկ սա էլ նշանակում է, որ նրանք չեն կարող ընդգրկվել ո՛չ համագումարի վարչության կազմում, ո՛չ էլ վերստուգիչ հանձնաժողովի անդամների թվում։ - Թովմասյանը մի պահ ընդմիջեց խոսքը, – Համաձայն եմ, խիստ է, բայց առայժմ այսպես է։ Գոյություն ունի աշխատանքային կարգապահություն, որը ոչ ոք իրավունք չունի խախտել։

Նույն մտահոգ դեմքով վեր կացավ, գնաց-եկավ սենյակում.

- Եվ առհասարակ չեմ հասկանում, թե դա ինչ հարց է, – քիչ լռելուց հետո շարունակեց Թովմասյանը, - այո՛, համագումարի ընթացքում խմբից ոչ ոք չի ընտրվել ղեկավարության աշխատանքային ապարատում։ Հետո՞։ ՈՒրիշ շատ գրողներ էլ ոչ մի տեղ չընտրվեցին։ Ի՞նչ անենք։

- Բայց համագումարում նրանցից և ոչ մեկին ձայն չտրվեց...

- Չէին էլ տալու, – շեշտակի ընդհատեց Թովմասյանը, – այստեղ արդեն ես եմ որոշակի դեր ունեցել։ Համագումարից մի քանի օր առաջ ինձ մոտ էր եկել Ալազանը և ցանկություն էր հայտնում ելույթ ունենալ։ «Պիտի պատմեմ բոլորին, թե Հայաստանի Ներքին գործերի ժողկոմ Խաչիկ Մուղդուսին ինձ ինչպես էր ծեծում ՆԳԺԿ-ի բանտում»։ Նույնիսկ ցանկանում էր որոշ մանրամասնություններ էլ նկարագրել։ Ես քեզ հարց եմ տալիս, մի՞թե Գրողների միության համագումարը դրա տեղն էր, – Թովմասյանը մի պահ լռեց, – ելույթ է ունենում Գուրգեն Բորյանը և վերլուծում է սովետահայ գրականության անցած ճանապարհը, Հրանտ Թամրազյանը տալիս է հետպատերազմյան սովետահայ բանաստեղծության բնութագիրը, ամբիոնից Շտեյնն է խոսում և դրվատում է մեր ժողովրդի ստեղծած գրական արժեքները, դահլիճում մեր դասականներն են՝ Ավետիք Իսահակյանն ու Դերենիկ Դեմիրճյանը ու ահա այստեղ Ալազանն ուզում է ելույթ ունենալ ու

պատմել, որ Մուղդուսին, երբ խփում էր իր այտոսկրերին ու ծնոտին, աջ ձեռքը բռունցք էր անում, իսկ երբ խփում էր փորին կամ կողերին, ձեռքը բացում էր թիակի նման։ Եղա՞վ։ Ես սա թո՞ւյլ կտայի։

Երկարատև լռություն տիրեց։

- Դե գոնե Գուրգեն Մահարուն կարելի է ձայն տալ, Սուրեն, – խոսակցությանը միջամտեց հայրս։

- Մահարուց առհասարակ բան չեմ հասկանում։ Անցյալ անգամ եկել էր ինձ մոտ, թե չորս հատորանոց դեպ պիտի գրեմ սիբիրյան մեր տառապանքների մասին, անունն էլ դնեմ «Փշալարից այն կողմ» և պիտի խնդրեմ, որ համագումարում ինձ ձայն տան, որ չորսհատորյակիս գաղափարական բովանդակության մասին ծանոթացնեմ ներկաներին։ Գուրգեն խան, – ասում եմ, - դու շատ լավ տեսնում ես, թե հիմա ինչ հարցեր ու խնդիրներ է բարձրացնում գեղարվեստական արձակը, ուրեմն ո՞ւմ է հարկավոր սիբիրյան կալանավայրերի կամ բանտարկյալների անտանելի պայմանների նկարագրությունը։

Դարձյալ լռեցինք։

- Ի դեպ, – Թովմասյանը կտրուկ դարձավ ինձ, – իսկ դու գիտե՞ս, որ Ալազանը ծավալուն մի վեպ պետք է գրի Սիբիրի մասին «Հյուսիսային աստղը» վերնագրով։ Չգիտես, չէ՞, – նա դառը ծիծաղեց, – դե իհարկե, այսպիսի բանը ձեր նմաններին նա ինչո՞ւ պիտի պատմի։

- Իմացա, որ վեպ է ուզում գրել, – քիչ լռելուց հետո շարունակեց Թովմասյանը, – ասացի, որ վեպի պլանը ձեռքին գա ինձ մոտ, որն էլ հիմք ընդունելով, որոշեցինք, որ այն կդառնա քսան-քսանհինգ մամուլանոց մի վեպ։ Մեկ մամուլը գնահատեցինք ընդունված ամենաբարձր գումարով և ես կարգադրեցի, որ ամբողջ գումարը անհապաղ վճարեն։ Այսինքն՝ միայն պլանի հիման վրա նա ստացավ իր քսան-քսանհինգ մամուլանոց դեռ չգրված վեպի ամբողջ հոնորարը, – Թովմասյանը բազմանշանակալից մեզ նայեց, – իսկ իմ այս

արարքը գիտե՞ք ինչպես է կոչվում. քրեական հանցագործություն կատարված կառավարական բարձր մակարդակով, որովհետև չի եղել մի դեպք, երբ չգրված գրքի համար հոնորար վճարեն։ Հասկանո՞ւմ եք։ Եվ նման ցնցող խախտումների ենք գնացել ոչ միայն Ալազանի, այլև աքսորից վերադարձած մյուսների համար։ Իսկ այս մասին նրանք չեն խոսում, չէ՞։

- Բովանդակալից համագումար անցկացրինք, – դարձյալ սկսեց Թովմասյանը, – շատ արժեքավոր գործեր են ստեղծվել, բացահայտվել են նաև թերություններ, որոնք ուղղելու համար դեռ պիտի աշխատենք ու աշխատենք։ Թոփչյանը գրական քննադատության բնագավառում մի շարք առաջնահերթ անելիքներ նշեց, և այլն, իսկ սրանք՝ խնդրե՛մ։

- Ահա սա է, որ կոչվում է իդեոլոգիա, – Թովմասյանը ուղղակիորեն դարձավ ինձ և նրա դեմքին վերջապես ժպիտ երևաց, – դրա համար էլ իմ ելույթում հատկապես ընդգծեցի, որ մեծապես հարգում ու գնահատում ենք աքսորից վերադարձած մեր գործընկերներին, անում ենք այն ամենը, ինչ կարող ենք, բայց գաղափարախոսական բնույթի ոչ մի զիջում նրանց նկատմամբ չի լինելու։ Եվ ես ասածիս մեջ ոչ մի սարսափելի բան չեմ տեսնում։ - նա մի պահ լռեց, – Այսքա՛ն։ Ես ուրիշ ասելիք չունեմ։

Հասկացանք, որ ընդունելությունն ավարտված էր։

* * *

Անցել է ավելի քան քառասուն տարի այս օրվանից։ Հոդվածի գործող անձանցից շատերն արդեն չկան, շատ դեպքեր ու իրադարձություններ էլ նորովի են վերագնահատվում ու արժեքավորվում։ Անկողմնակալ եզրակացություններ անելու համար քիչ նյութ չի տալիս վերը բերված իրապատումը։ Եվ իսկապես, մի՞թե համագումարի դահլիճը այն տեղն էր, որ Ալազանը Հայաստանի ու Միության բազմաթիվ ականավոր հյուրերի մոտ պատմեր թեկուզ մի քանի սահռկեցուցիչ դրվագներ աքսորական կյանքի իր «տանջանքապատումներից»։

Բայց նաև, եթե նա՝ հայ գրողը, այդ մասին չխոսեր հենց համագումարում, իր մեծ ու փոքր գրչակից ընկերների մոտ, ապա ուրիշ որտե՞ղ նա այդ պետք է աներ։ Ճի՞շտ էր արել Թովմասյանը, որ չէր խրախուսել Գուրգեն Մահարուն «Փշալարից այն կողմ» խորագիրը կրող քառահատորյակն իրականացնելու համար։ Գուցե մենք կունենայինք, ասենք, մի յուրատեսակ «Դոկտոր Ժիվագո» կամ մի հայկական «Գուլագ արխիպելագ», մանավանդ եթե այն առարկայանալու էր Գուրգեն Մահարու տաղանդավոր գրչի տակ։ Բայց նաև՝ ո՞վ չգիտեր հիսունական թվականների մեր գրական-մշակութային և մտավոր-հասարակական կյանքը, որի պայմաններում այդ նպատակաուղղվածությունն ունեցող ստեղծագործության գրական ճակատագիրը, եթե իհարկե այն հրատարակվելու բախտին արժանանար, առավել քան անագորույն պիտի լիներ։

Այս և համանման բնույթի այլ հարցադրումներին ես պատասխանել չեմ կարող, ասենք, երևի այնքան էլ հեշտ չէ այդ հարցերին սպառիչ ու հանգամանալից պատասխան տալը։ Ես շարադրել եմ իրադարձություններն այնպես, ինչպես դրանք եղել են, իսկ այդ ամենի մասին անկողմնակալ թող դատի մեր բարեմիտ ընթերցողը...

Երեկոյան Երևան, 1991, № 153, օգոստոսի 16